Հավելված N 3
ՀՀ էկոնոմիկայի նախարարի
2026 թվականի ապրիլի 16-ի
N 1078-Լ հրամանի

ԿԱՐԳ
«ԲՈՒՍԱԲՈՒԾՈՒԹՅԱՆ ԱՋԱԿՑՈՒԹՅԱՆ 2026 ԹՎԱԿԱՆԻ» ԾՐԱԳՐԻ ՄՈՆԻԹՈՐԻՆԳԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ

1. Սույն կարգով կարգավորվում է Հայաստանի Հանրապետության կառավարության 2026 թվականի մարտի 26-ի N 384-Լ որոշմամբ հաստատված «Բուսաբուծության աջակցության 2026 թվականի» ծրագրով (այսուհետ՝ Ծրագիր) նախատեսված մոնիթորինգի իրականացման իրավահարաբերությունները:

2. Ծրագրի 21-րդ կետով սահմանված կարգի համաձայն մշակաբույսի ցանքատարածություններում մինչև բերքահավաքը մարզպետի աշխատակազմը նախարարության ներկայացուցչի մասնակցությամբ իրականացնում է ընտրանքային մոնիթորինգ, ընդ որում, մոնիթորինգի ընդգրկելիության նվազագույն շեմը պետք է կազմի համայնքի շահառուների թվի առնվազն 20 %-ը:

3. Մարզպետի աշխատակազմի կողմից նախարարության ներկայացուցչի մասնակցությամբ իրականացվող ընտրանքային մոնիթորինգի 20 %-ում ներառվող շահառուների ընտրությունն կատարվում է մարզպետի աշխատակազմի կողմից:

4. Համատարած և ընտրանքային մոնիթորինգներն իրականացվում են ցանքատարածություններ այցելությունների, փաստաթղթերի և ցանքատարածության ուսումնասիրության, համատարած մոնիթորինգի ժամանակ նաև լուսանկարման ինչպես նաև շահառուի կողմից կատարված ցանքատարածություն այցելության վերաբերյալ վերջինիս հետ կապի միջոցներով նախապես պայմանավորվածությունից հետո:

5. Շահառուի հետ ցանքատարածություն այցելության նպատակով պայմանավորվածության ձեռք բերման անհնարինության պարագայում և համատարած և ընտրանքային մոնիթորինգների դեպքում գրավոր կերպով տրամադրվում է տեղեկատվություն համապատասխանաբար համայնք և համապատասխան մարզպետի աշխատակազմ, որի արդյունքում շահառուին փոխհատուցում չի տրամադրվում, իսկ

փոխհատուցման տրամադրված լինելու դեպքում շահառուին ներկայացվում գումարների հետ վերադարձի պահանջ ըստ ծրագրի 25-րդ կետի:

6. Համատարած մոնիթորինգն իրականացվում է տվյալ մշակաբույսի բերքահավաքից առավելագույնը 2 ամիս առաջ փոխհատուցում ստանալու նպատակով շահառուի կողմից թղթային եղանակով համայնքի կամ բնակավայրի վարչական ղեկավարին Ծրագրի 17-րդ կետով սահմանված դիմում և կից փաստաթղթեր ներկայացնելուց հետո:

7. Ծրագրի 9-րդ կետի 3-րդ ենթակետով սահմանված ժամկետներում ըստ մարզերի և մշակաբույսերի տեսակների հավաստագրված սերմերով ցանք իրականացնելու դեպքերում և Ծրագրի 13-րդ և 17-րդ կետերով սահմանված փաստաթղթերի առկայության և դրանում առկա տեղեկատվության համապատասխանության պարագայում համատարած և ընտրանքային մոնիթորինգների արդյունքում տրվում է դրական եզրակացություն:

8. Համատարած մոնիթորինգի արդյունքում կից լուսանկարներով կազմվում է արձանագրություն՝ համաձայն Ձևի, որը ստորագրվում է Հանձնաժողովի անդամների և շահառուի կողմից:

9. Լուսանկարներում հստակ պետք է երևա ամբողջ ցանքատարածությունը, ցանքատարածությունում բույսերը և դրանց վիճակը:

10. Ընտրանքային մոնիթորինգի դեպքում լուսանկարելու և կազմված արձանագրությանը դրանք կցելու անհրաժեշտություն չկա: Արձանագրությունը համաձայն Ձևի ստորագրվում է մարզպետի աշխատակազմի և նախարարության ներկայացուցչների, ինչպես նաև շահառուի կողմից:

11. Ընտրանքային մոնիթորինգի իրականացման ընթացքում նախարարության ներկայացուցիչ է հանդիսանում Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարության «Տնտեսական զարգացման և ֆինանսավորման կառույց» հիմնարկը:

12. Հանձնաժողովը ծրագրի շրջանակներում կատարված ցանքատարածություններում համատարած մոնիթորինգն իրականացնելուց հետո 15 աշխատանքային օրվա ընթացքում ամփոփում է իր կողմից իրականացված մոնիթորինգի արդյունքները և մոնիթորինգի դրական եզրակացությանը կցելով անշարժ գույքի (գյուղատնտեսական նշանակության հողի) նկատմամբ սեփականության իրավունքը հավաստող պետական գրանցման վկայականի պատճենը, պայմանագրային հիմունքներով առնվազն մեկ տարի ժամկետով

վարձակալության (ենթավարձակալության) կամ օգտագործման դեպքում՝ նաև նոտարական կարգով վավերացված այդ պայմանագրի պատճենը, կամ համայնքի կամ բնակավայրի վարչական ղեկավարի կողմից տրված տեղեկանքը՝ գյուղատնտեսական նշանակության հողը շահառուի կողմից փաստացի օգտագործվելու վերաբերյալ (տեղեկանքում պարտադիր նշվում է շահառուի կողմից փաստացի օգտագործվող հողամասի կադաստրային ծածկագիրը)) շահառուների վերաբերյալ տեղեկատվությունը ներկայացնում է Նախարարություն՝ նախարարության կողմից մշակված ու հաստատված համայնքին և մարզպետի աշխատակազմին տրամադրված ձևաչափով:

13. Մարզպետի աշխատակազմը իրականացված ընտրանքային մոնիթորինգից հետո առավելագույնը 1 ամսվա ընթացքում ամփոփում է իր կողմից իրականացված ընտրանքային մոնիթորինգի արդյունքները և ներկայացնում է նախարարություն՝ ծրագրի 20-րդ կետով նախատեսված ձևաչափով:

ՁԵՎ

Արձանագրություն N

2026 թվականի մարտի 26-ի N 384-L որոշմամբ հաստատված «Բուսաբուծության աջակցության 2026 թվականի» ծրագրի շրջանակներում Շահառու՝ ----------

հացահատիկային, հատիկաընդեղեն մշակաբույսերի և բազմամյա խոտաբույսերի ցանքատարածությունում իրականացված մոնիթորինգի վերաբերյալ

Նախատեսված ըստ պայմանագրի

Մարզ, Համայնք	Բնակավայր	Փաստացի ցանքատարածության մակերեսը (հեկտարը՝ըստ մշակաբույսերի)	Ծրագրով սահմանված փաստաթղթերի առկայությունը	Մշակաբույսի տեսակը	Սորտը	Անշարժ գույքի (գյուղատնտեսական նշանակության հողի) նկատմամբ սեփականության իրավունքը հավաստող պետական գրանցման վկայականի ,պայմանագրային հիմունքներով առնվազն մեկ տարի ժամկետով վարձակալության (ենթավարձակալության) կամ օգտագործման դեպքում՝ նաև նոտարական կարգով վավերացված այդ պայմանագրի, կամ համայնքի կամ բնակավայրի վարչական ղեկավարի կողմից տրված տեղեկանքի գյուղատնտեսական նշանակության հողը շահառուի կողմից փաստացի օգտագործվելու վերաբերյալ՝ համարները	Հողամասի կադաստրային ծածկագիրը

* ֆիզիկական անձի դեպքում՝ անուն ազգանունը, իրավաբանական անձի դեպքում՝ կազմակերպության անվանումը

□ Ցանքատարածությունն առկա է և համապատասխանում է ծրագրին

□ Չի համապատասխանում ծրագրին*

<<___>>_____202 թ.

*Լրացուցիչ նշումներ

_____

անուն ազգանուն

_____

անուն ազգանուն

_____

անուն ազգանուն